ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
24.11.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 գնման պայմանագրի

ք. Երևան 20 . 08 . 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նորբերտ Զատկոյի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը և Վանաձորում ՈՒԵՖԱ ստանդարտներով ֆուտբոլի մարզադաշտի կառուցման/վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 24.11.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-25/6 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրի 18-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<

18	Մատուցման ծառայությունների ֆինանսական ապահովում	Նախնական փուլում ստացված արդյունքները ներկայացվում են Պատվիրատուին և Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո ՀՀ կառավարության 07.08.2025թ. N 1089-Ա որոշման (հիմնավորում) համաձայն Կատարողին կվճարվի՝ 98 840 եվրո: Երկրորդ՝ «Նախագիծ» փուլում Պատվիրատուին ներկայացվում է նախագծի էսքիզային տարբերակը, որը Պատվիրատուի ընդունումից հետո կվճարվի պայմանագրի արժեքի 25%-ը: Երրորդ՝ «Աշխատանքային փաստաթղթեր» փուլում Պատվիրատուին ներկայացվում է նախագծի աշխատանքային փաթեթը, որը Պատվիրատուի ընդունումից հետո կվճարվի պայմանագրի արժեքի 38%-ը: Մնացած ֆինանսավորումը կկատարվի քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննությունների դրական գրավոր եզրակացություններ ստանալուց հետո:	>>

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Վենյուէրա Հոլդինգ>> ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	Ռոբոտնիցկա 286, Պովագսկա Բիստրիցա
կառավարական տուն 3	017 01, Սլովակիա
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ SK72 0900000000523975343 7
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 2024129701
Հ/Հ 900011055424	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Վ. Հարությունյան	_____ Ն. Զատկո
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.